

## Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քրիստոնեության պայմաններում նորովի մեկնաբանված հեթանոսական կարևոր տոներից է եղել նաև Քրիստոսի Հարության տոնի հետ համադրված Չատիկը: Հրեական նույնաբնույթ տոնի հետ որևէ առնչություն չունեցող մեր Չատիկը իր անվամբ պարտական է հացահատիկին. *Չատիկ* <\**q-hատիկ* (տոնի *Անցանակ*, *Անցարան*, *Անցիկ* քրիստոնեական անուններն են քարգմանությունները հրեական *Պասեք* անվան):<sup>1</sup> Չ նախածանցը *Չատիկ* անվան մեջ, ինչպես է այլ դեպքերում ևս, հանդես է գալիս կամ սաստկական նշանակությամբ, կամ որպես սին տարր (բայց որոշ բայերում դրանց «ֆիզիկական նշանակությունը փոխում է բարոյականի»): հմմտ. *գարմանք*, *գարդ*, *գեղծ* և այլն:<sup>2</sup>

Ծաղկազարդից մինչև Չատիկ տևող Չատկաշաբաթի և բուն Չատիկ ծիսակարգում կարևոր տեղ էր վերապահված հացահատիկներին և նրանցից պատրաստված ուտեստներին, իսկ Ծաղկազարդի կիրակի օրը կոչվում էր *Հատիկի կիրակի*:<sup>3</sup> Այդ օրը, Չավախքի բոլոր տներում, օրինակ, *հատիկ* կոչվող ուտեստն էր լինում, որը «խաշած մաքուր *ցորեն* է՝ հետը քիչմիշ, շաքարի մանրուք և ընկույզ խառնած», իսկ գատկական տնօրինների ժամանակ տներում «խոնջի վրա դրված է լինում *թթխմոր*, աղ, խունկ, *հացահատիկներ*, ջուր և այլն»:<sup>4</sup> Գարդմանում (Գանձակի գավառ) Չատիկ նախորդ օրվա տնօրիններից հետո քահանան ստանում էր «կամ մի քանի կոպեկ, կամ ձու, *բրինձ*, *ցորեն* և այլն»:<sup>5</sup>

Նախորդ դարաշրջանների համեմատ հացագոհ բույսերի մշակումը Հայկական լեռնաշխարհում նոր բարձր մակարդակի էր հասել ուրարտական դարաշրջանում:<sup>6</sup> Ուրեմն, ուրարտական դիցարանում անտեսված չէին լինելու հացահատիկի պաշտամունքն արտացոլող աստվածությունները: Մեր կարծիքով, այդպիսիք էին արական աստվածությունների մի քանակ կազմած Էլիպուրին, Թառախինին, Ադարութան և Իրմուշինին: Սրանցից առաջինի՝ Էլիպրի/Էլիպուրիի (<sup>D</sup>Elipri//<sup>D</sup>Elipuri),<sup>7</sup> ուրարտական կարևոր աստվածություններից մեկը լինելու մասին է խոսում այն իրողությունը, որ Ուրարտում գերագույն աստված Խալդինին ձոնված կոթողներից բացի եղել են ևս մի քանի աստվածներին ձոնված կոթողներ: Դրանցից հայտնաբերվածները ձոնված են Թեյշեբային (երկու կոթող), Շիվինինին, Խուտուինինին, Կուեռային և Էլիպուրիին (մեկական կոթող):<sup>8</sup> Էլիպուրիին ձոնված կոթողը հայտնաբերվել է Արճեշի շրջանի Արծվաբերդում, որը հիմք է տվել ենթադրելու, թե սա եղել է Արճեշի աստվածը, իսկ նրա պաշտամունքը տարածված է եղել Վանա լճի հյուսիսային ափերին՝ Արճեշում և նրա շրջակայքում:<sup>9</sup> Արճեշի շրջանը ընդհուպ XX դ. սկզբները (մինչև Մեծ եղեռնը) հայտնի էր որպես «հացահատիկների շտեմարան»:<sup>10</sup>

<sup>1</sup> Հ. Ա ճ ա յ ա ն, *Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ)*, հ. I, Եր., 1971, էջ 212:

<sup>2</sup> Մ. Ա բ ե ղ յ ա ն, *Հայոց լեզվի տեսություն*, Եր., 1965, էջ 188, «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. II, Եր., 1975, էջ 61-64:

<sup>3</sup> Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն, *Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ)*, հ. II, Եր., 1944, էջ 10, հ. III, Եր., 1944, էջ 64:

<sup>4</sup> Ե. Լ ա լ ա յ ա ն, *Երկեր*, հ. I, Եր., 1983, էջ 284, 287:

<sup>5</sup> Նույնը, հ. II, Եր., 1988, էջ 449:

<sup>6</sup> Н. А р у т ю н я н, *Земледелие и скотоводство Урарту*, Ер., 1964, стр. 53-101.

<sup>7</sup> Г. М е л и к и ш в и л и, *Урартские клинообразные надписи*, М., 1960, N 27, N 104.

<sup>8</sup> Ս. Հ Վ ա յ ա կ յ ա ն, *Վանի քաղաքության պետական կրոնը (այսուհետև՝ ՎԹՊԿ)*, Եր., 1990, էջ 69:

<sup>9</sup> Ն. Ա դ ն ց, *Հայաստանի պատմություն (այսուհետև՝ ՀՊ)*, Եր., 1972, էջ 163, 227: ՎԹՊԿ, էջ 56:

<sup>10</sup> Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Ստ. Մ ի լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա բ ս ե ղ յ ա ն, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. I, Եր., 1986, էջ 462:

Այս իրողությունը հիմք ընդունելով, մենք ենթադրում ենք, որ Elipuri դիցանվան մեջ կարող է արտացոլված լինել դիցանվանակիր աստվածության «հացահատիկային» բնույթը: Eli-puri բաղադրիչներից բաղկացած դիցանվան առաջին բաղադրիչը ներկայացնում է հայերեն *եղի* «հասնելու մտ կաթնահամ ցորեն» բառը (հմմտ. «*Եղին* -որ է անհաս ցորեն»),<sup>11</sup> որի *հեղի* տարբերակից ունենք *հեղիք* «բերք, բույս»:<sup>12</sup> Այս բառերի հիմքում հ. ե. \*el- «ելնել, բարձրանալ», «աճել» արմատն է, որից ունենք նաև *ելանել* «դուրս գալ, ծագել, բխել», *ելուտ* «բույսի աճում», *ելուզանել* «ընձյուղել, ծլել» և այլն:<sup>13</sup> Ազգակից լեզուների մույնարմատ բառերից են հին հնդկ. rōdati «բարձրանալ», «աճել», ավեստ. raodaiti «աճում է», գոթ. liudan «աճել», և այլն:<sup>14</sup> *Եղի/հեղի* բառի վերջնաձայն –ի-ն հայերենի բուսանուններ կերտող վերջածանցն է. հմմտ. *այգի, գիհի, ծիրանի, կաղնի* և այլն:<sup>15</sup> Գ. Ջահուկյանը Elipuri դիցանվան մեջ տեսնելով հնդեվրոպական միևնույն արմատը, դիցանվանը վերագրում է «ելաբեր» (կամ «զոյաբե՞ր») նշանակությունը:<sup>16</sup>

Eli-puri դիցանվան երկրորդ բաղադրիչի հիմքում մենք տեսնում ենք հ.-ե. \*sper- «ցանել, ցրվել, սփռել» արմատի մի տարբերակը՝ ազգակիցը հայ. *փռել* և *փրփուր* (<\*փիր-փուր) բառերի:<sup>17</sup> Նույն արմատից են ավեստ. fra-sparəya «ճյուղ»,<sup>18</sup> հուն. σπέρμα «սերմ», σπóρος «ցանք», «սերմ», «պտուղ, բերք, բերքահավաք» բառերը և այլն:<sup>19</sup> Հնդեվրոպական մույն արմատի մեկ այլ տարբերակն է ընկած *սպուր* բառի հիմքում, որը նշանակում է «ուտելիք, կերակուր», «ջրալի կերակուր, սուպ», նաև «սպրելու միջոց»<sup>20</sup> (սրանում ա-ն մախահավելվածական ձայնավոր է): *Սպուր*-ի արմատակից բառերից հնչյունական տեսքով նրան առավել մոտ է *սպուռ*-ը՝ չնայած «անասունների կեր, խոտ, դարման» նշանակությամբ<sup>21</sup> վերջինս, կարծես թե, հեռու է *սպուր*-ից: Մրանց իմաստաբանական սերտ կապի մասին է խոսում արմատակից բառերի հետևյալ շարքը. *սրտու* «կնյուն, ճիլ, սեգ, շամբուտի եղեգ», *սրոս* «վարսակի նման մի խոտեղեն է», *սրնթող* «ցորենի նման, բայց վնասակար մի բույս», *սրոզ* «հացի մի տեսակ (մատնաքաշ կամ բոբոն)», *սրոզն* (<\*սրու-զոն) «բաղաբոջ», *սրոզնք*, «մեծնաբրդոշ» (վերջիններինս մեջ՝ *դոն* նշանակում է «մի տեսակ հաց, պաքսիմատ» <հ.-ե. \*dhon-):

Բերված բառերի հիմքում ընկած է \*sper-արմատի \*spur- տարբերակը, որով դեռևս վաղ նախնադարում կոչվել են ինչպես խոտակեր կենդանիների համար ուտելի խոտազգի սիգաբույսերը (դրանք «ցորենի ու գարու նման, բայց ավելի կարճ ու բարակ» բույսեր են),<sup>22</sup> այնպես էլ մարդկանց համար ուտելի նրանց սերմերն ու դեռևս վայրի հացահատիկները: Մեր բառերի *սուր/սուռ* արմատի հ.-ե. \*spur- նախաձևից սերած լինելու մասին են խոսում նրա \*p(h)ur- տարբերակից ծագած ազգակից լեզուների հետևյալ բառերը. հին անգլ. fyrs, ռուս. пырей «սեգ», հին պրուս. pure «որոմ», հուն. πύρος «ցորեն», πύρον «ցորենի հաց», լիտվ. pūrai, լատիշ. pūrī «աշնանացան ցորեն», հին հնդկ. pūra «կարկանդակ» և այլն:<sup>23</sup> Այս բառերի շարքը պետք է դասել նաև հնդեվ-

<sup>11</sup> *Բառգիրք հայոց, Բնական քննադիրը, ստաջարանը և ծանոթագրությունները* Հ. Անայանի, Եր., 1975, էջ 87:

<sup>12</sup> ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 19:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>15</sup> Նույն տեղում, հ. I, էջ 166, հ. IV, Եր., 1979, էջ 627::

<sup>16</sup> Գ. Ջահուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցաբանում (այստեղևուն՝ ՀՇՈՒԴ), «Պատմա-բանասիրական հանդես» (այստեղևուն՝ ՊԲՀ), 1986, քիվ 1, էջ 54, 57:

<sup>17</sup> ՀԱԲ, հ. IV, էջ 531, 535:

<sup>18</sup> Т. Г а м к р е л и д з е, В. И в а н о в, Индоевропейский язык и индоевропейцы (այստեղևուն՝ ИЯИ), т. I-II, Тб., 1984, т. I, стр. 205.

<sup>19</sup> ՀԱԲ, հ. IV, էջ 531, 535:

<sup>20</sup> ՀԱԲ, հ. I, էջ 210, 239: ՀԲԲ, հ. I, Եր., 1944, էջ 210:

<sup>21</sup> ՀԲԲ, հ. I, էջ 210:

<sup>22</sup> ՀԲԲ, հ. IV, Եր., 1945, էջ 210:

<sup>23</sup> ИЯИ, т. II, стр. 657.

րուպական որևէ լեզվից փոխառյալ վրացերեն *պուրի* «հաց» բառը:<sup>24</sup> Ասվածները հիմք են տալիս Elipuri դիվանունը ստուգաբանել որպես «գեռահաս հացահատիկ»:

«Մեղի դրան» դիցանվանացանկում Էլիպուրիին նախորդում է հնդեվրոպական ծագումով Կուեռա աստվածը, որի պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել Ուրարտական թագավորության կազմավորումից շատ առաջ:<sup>25</sup> Ուիա//Վիա դիցուհու հետ զույգ կազմած Կուեռան եղել է պտղաբերության և ջրի անձնավորում աստվածություն<sup>26</sup> (հմմտ. <sup>D</sup>Quera/Կուառ և կուառ-ն «ջրի նեղ առու», իսկ *ու//ու* հմմտ. *շուառն//շուառն*, *շուշ//շուշ*, *տուար//տուար* և այլն): <sup>D</sup>Սիա/Սիա դիցանունը ևս հնդեվրոպական ծագում ունի: Նրա մեջ դժվար չէ տեսնել հ.-ե. \**uiā*-նախաձևը՝ ծագած \**uei-/\*ui-* «ուրբել, հյուսել» արմատից: Այս նախաձևից և նրա տարբերակներից սերած բառերից են հայ. *գի/գիհի*, *գինի*, հին հնդկ. *vayā* «ճյուղ», հուն. *οἶν* «խաղողի վազ», լատին. *vies* «կապում են», հին սլավ. *věja* «ճյուղ», լիտվ. *vejū* «ուրբում են» և այլն:<sup>27</sup> Բուսական աշխարհին առնչվող այս բառերը առաջացել են հնդեվրոպական հեռավոր անցյալում՝ առանձին բույսերի ոլորվելով աճելու պատճառով («խաղողի վազ»>«խաղող»>«գինի»), իսկ ծառերի մատղաշ ճյուղերի՝ ոլորվելով հյուսվելու կարողության պատճառով (այստեղից էլ «կապ» և այլ նշանակությունները): Ուրեմն, Վիան լինելու էր բուսաշխարհի անձնավորում մի դիցուհի, իսկ Էլիպուրին եղել է պտղաբերության աստված Կուեռային և բուսականության դիցուհի Վիային ուղեկցող մի աստվածություն՝ գուցե հենց նրանց որդին:

Նույնը պետք է ասել նաև Էլիպուրիի հետ քառյակ կազմած իրարահաջորդ երեք աստվածությունների մասին, մանավանդ որ նրա մեծ սրանք ևս կրում են «հացահատիկային» ստուգաբանությամբ անուններ: Արական այս աստվածությունների քառյակի գոյության մասին է խոսում այն փաստը, որ սրանց զուգակից չորս դիցուհիները (և միայն նրանք) կրում են միևնույն <sup>D</sup>Aini (<sup>D</sup>Ainaúe) անունը:<sup>28</sup> Իսկ քառյակի գոյությունը, մեր կարծիքով, կապ ունի ցորենի վեգետացիայի տևողության հետ: Հայկական լեռնաշխարհի բարձրադիր շրջաններում զարմանացան ցորենի վեգետացիան տևում է մոտավորապես 4 ամիս. օրինակ, Միսիանում այն 117-120 օր է, Վարդենիսում՝ 122-128 օր:<sup>29</sup> Այս առթիվ նշենք, որ Ուրարտում ևս ընդունված էր տարվա ամիսներից բաղկացած լինելու գաղափարը:<sup>30</sup> Ցորենի վեգետացիայի 4 ամիսների և հիշյալ քառյակի համապատասխանությունը հուշում է, որ այս աստվածությունները եղել են Արա Գեղեցիկի տիպի աստվածություններ կամ համարվել այդպիսի մի աստվածության չորս դրսևորումները: Բույսերն ու հացահատիկը առհասարակ պատկերացվել են գեղեցիկ երիտասարդի կամ պատանու տեսքով, իսկ Արան եղել է հողին, բուսաշխարհին և մասնավորապես հացահատիկներին առնչվող մի աստված, խորհրդանշելով «աշնանը մեռնող և զարնանը հառնող բուսականությունը, ծրոյ, հասունացող, հնձվող ու կալվող հացահատիկը՝ մեռնողի ու հառնողի ցիկլային հավերժ կրկնություններով»:<sup>31</sup>

Առասպելաբանական հին պատկերացումների համաձայն, հնձում-կալում գործընթացը համարժեքն էր հացի ոգու, հացահատիկի անձնավորում աստվածության չարչարանքների և սպանության,<sup>32</sup> իսկ երբ նա թաղվում և հայտնվում էր անդրշիրիմյան աշխարհում, ապա՝ արտացոլում էր հացահատիկի ամբարումն ու նոր ցանքսը:

<sup>24</sup> В. Г е о р г и е в, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, стр. 216.

<sup>25</sup> Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, Կուեռա-Կուառ աստվածության պաշտամունքը հայկական լեռնաշխարհում, ՊԲՀ, 1990, թիվ 1, էջ 152-166:

<sup>26</sup> Նույնը: Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, Ուրարտական դիցարանի աստվածությունների մասին, ՊԲՀ, 1975, թիվ 1, էջ 160, ՎԹՊԿ, էջ 27, 50-55:

<sup>27</sup> ՀԱԲ, հ. IV, էջ 627, ИЯИ, т. II, стр. 649-650.

<sup>28</sup> ՎԹՊԿ, էջ 27:

<sup>29</sup> Ա. Մ ա ք և ն ս յ ա ն, Ցորեն, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 12, Եր., 1986, էջ 168:

<sup>30</sup> ՎԹՊԿ, էջ 78:

<sup>31</sup> Ս. Հ ա ռ ո թ յ ո ն յ ա ն, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Եր., 2001, էջ 26-27:

<sup>32</sup> С. А р у т ю н я н, Отражение древневосточной жатвенной мифологии в загадке о пшенице, «Лриերեր հասարակական գիտությունների», 1969, N 11, стр. 67-77.

Ըստ այսմ, հասկանալի էր թե ինչու «Մեերի դրան» դիցանվանացանկում քառյակը եզրափակող Իրմուշինին հաջորդում է անդրշիրինյան մի աստվածություն՝ «Հոգիներ փոխադրող աստվածը»:<sup>33</sup> Ցանք/թաղում առասպելաբանական մույնացման հետևանքն է *դիր/տիր* բառը, որը նշանակում է թե՛ «ցորեն սերմանելու մի առանձին ձև, որ առատ և ընտիր ցորեն է տալիս», թե՛ այն տեղը, «որտեղ դրված են մնջեցյալների մարմինները, շիրիմ, գերեզման»:<sup>34</sup> Հ. Աճառյանի կարծիքով, այս բառը ծագում է *դնել* բայի *դի* արմատից (<h.-ե.\*dhe-)՝ մասնիկով, իսկ Վ. Բոդյանի և Ս. Երեմյանի կարծիքով, սրա նախնական *տիր* տարբերակը ծագում է հեթանոսական Տիր աստծու անունից:<sup>35</sup> Ի նկատի առնենք, որ Տիրը ոչ միայն դարձյալի աստված էր, այլև «առել է մարդկանց հոգիները և ուղեկցել անդրաշխարհ»:<sup>36</sup> Իր այս վերջին գործառնությունը Տիրը հիշեցնում է «Մեերի դրան» դիցանվանացանկում «հացահատիկային» քառյակին հաջորդող «Հոգիներ փոխադրող աստվածությանը»: Ի դեպ, հայոց մեջ մինչև XX դարի սկզբները գոյատևում էր մի սովորույթ, որը պահանջում էր Չատկին ոչ միայն ցերեկը, այլև գիշերը սեղանը լի, իսկ դռներն ու պատուհանները բաց պահել, որպեսզի իրենց կենդանի հարազատներին այցելող նախնայաց հոգիները կարողանան օգտվել ընդհանուր հյուրասիրությունից:

Հացահատիկի ցանքից մինչև հասուն հասկերի կալսումն ու երևումը դրսի աշխատանք էր և տղամարդու գործ, իսկ տուն հասնելուց հետո մինչև նրա հաց դառնալը՝ ներսի աշխատանք էր, կանացի գործ: Այս դեպքում ևս արժե հիշել հանրահայտ առածը՝ «Տղամարդ որ կա՝ դրսու պատ է, կնիկը՝ ներսի»:<sup>37</sup> Ըստ այսմ, Աինի դիցուհիները, լինելով «հացահատիկային» չորս արական աստվածությունների իգական գույգերը, համարվելու էին անձնավորումները և հովանավորները հացահատիկի հետ տնային պայմաններում ընթացող չորս իրարահաջորդ գործողությունների՝ աղալու, մաղելու, խմոր շաղվելու և հաց թխելու: Որ այս գործողությունները գուտ կանացիական են եղել, ցույց են տալիս հայ ազգագրության նյութերը: Մինչև ջրաղացի գյուտը աղալը ևս այդպիսի գործ է համարվել. հմմտ. *աղալ* բառի հետ մույնարմատ *աղիջ>աղջիկ* և *աղախին* բառերը:<sup>38</sup> Ի դեպ, դա իր արտացոլումն է գտել նաև «Մասնա ծոերի» բազմաթիվ պատումներում (օրինակ, Կուզբաղեն «Քառսուն ազապ աղջիկ կը տանը՝ էրկանք աղան»):<sup>39</sup> «Հացահատիկային» չորս աստվածությունների իգական գույգերի միևնույն *Աինիներ* (Ainaie) անվամբ հանդես գալը կարող է արձագանքը լինել նախկինում նրանց միևնույն դիցուհու չորս դրսևորումները լինելու իրողության: Իսկ այդ դիցուհին անձնավորելու էր հանապազօրյա հացը:

Արական քառյակի երկրորդ աստվածը Թառաինին է, որի, ինչպես նաև չորրորդի՝ Իրմուշինին, անվան մեջ կարելի է առանձնացնել -ini վերջնամասը՝ մույնական հնդեվրոպական ծագումով հայերենին -ին վերջածանցի հետ (հմմտ. *ամուսին*, *դարբին*, *լուսին* և այլն): <sup>40</sup>Tarra-ini դիցանվան հիմքը Գ. Չախուկյանը համեմատում է հայերեն *թառ* «թառել, բարձր տեղ նստել» բառի հետ և, *Էլիպուրի*, *Իրմուշինի* դիցանունների մնաց, այս դիցանվանը ևս վերագրում է հայկական ծագում:<sup>40</sup> Ճիշտ է, որ հայերեն *թառ* բառի հիմքում հ.-ե. \*tṛs- «չորանալ, ցամաքել» արմատն է:<sup>41</sup> Սակայն, մեր դիցանվան դեպքում պետք է ի նկատի առնել ոչ թե թառի բարձր տեղադրությունը, այլ նրա չորությունը՝ թառը չորացած ճյուղն է, և այդ չորությունը, այս դեպքում, վերագրել հասուն հատիկին, չոր հասկին (ի տարբերության եղիի, որը կանաչ հասկի անհաս հատիկն է):

<sup>33</sup> Գր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Հայոց լեզվի պատմություն (ինն շրջան), Եր., 1961, էջ 138: «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիս», հ. I, էջ 47, ծան. 2: ՎԹՊԿ, էջ 27:

<sup>34</sup> ՀԲԲ, հ. I, էջ 523:

<sup>35</sup> ՀԱԲ, հ. I, էջ 675: Հայ ժողովրդի պատմություն, ՀՄՄՀ Գ-Ս հրատ., հ. I, Եր., 1971, էջ 805-806:

<sup>36</sup> Ս. Հ ա ռ ո թ յ ու ն յ ա ն, Հին հայոց հավատալիքներ..., էջ 45:

<sup>37</sup> Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Առածանի, Եր., 1960, էջ 204:

<sup>38</sup> Ա. Մ է յ ն, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 227-228:

<sup>39</sup> «Մասնա-ծոեր», ժողովրդական վեպ, հ. I, Եր., 1936, էջ 70 (նաև էջ 183, 264, 346, 406, 504, 669, 772, 802, 823, 1001, 1051, 1104 և այլն):

<sup>40</sup> ՀՇՈՒԴ, էջ 51-57:

<sup>41</sup> ՀԱԲ, հ. II, էջ 154-157:

Այսպիսով, Թառահինն, ի տարբերություն Էլիպուրիի, իսկապես լինելու էր հասունացող-հասունացած հացահատիկն անձնավորած աստվածություն:

Քառյակի երրորդ աստվածության <sup>D</sup>Adaruta անվան մեջ Գր. Ղափանցյանը տեսնում է արամեական Atar//Attar (արադ. Istar) դիցանունը և արամեա-ասորական -uthā իգական սեռի ցուցիչ վերջածանցը, այս աստվածությանն համարելով, ծննդի, բազմացման և, հավանաբար, որպես բուժիչ դիցուհի:<sup>42</sup> Բայց հայտնի է, որ Ադարուտան իգական աստվածությունն է: «Սեռի դրան» դիցանվանացանկում նա հիշատակված է 35 արական աստվածությունների շարքում: Adaruta <\*ad-ar-uta դիցանվան մեջ ad-արմատից բացի առկա են -ar և -uta հնդեվրոպական ծագմամբ վերջածանցները: Մրանցից առաջինը գուգահեռն է հայերեն -ար (հմմտ. արդ-ար, գալ-ար, պալ-ար և այլն), իսկ երկրորդը՝ -ոյթ (հմմտ. ել-ոյթ, երեւ-ոյթ, գ-այր-ոյթ և այլն), հնդեվրոպական ծագմամբ վերջածանցների:

Adaruta դիցանվան \*ad- արմատը ևս հնդեվրոպական ծագում ունի և, մեր կարծիքով, նույնական է հ.-ե. \*Had- (\*Hat-) արմատի հետ: Վերջինս է առկա հայ. *հատ*, *հատիկ*, ավեստ. *adū-frādanā* «ցորենաշատ», լատին. *ador* «հաճար», գոթ. *atisk* «սերմ» բառերի հիմքում:<sup>43</sup> Այս նույն արմատն է առկա լինելու նաև հուն. *ἀθήρα* «հասկի քիստ», «խազու՛՛ հասկի և ծղոտի խոշոր կտորտանք» բառում (հավանաբար, նաև եգիպտական ծագում վերագրված հունարեն *ἀθήρα* *ἀθαρα* «այլուրով կամ մաքրած ցորենով պատրաստված կերակուր» բառում):<sup>44</sup> Հունարեն արմատակից *ἀθήρα* և *ἀθήρα* բառերի միջոցով հաստատվում է մեր *հատ*, *հատիկ* բառերի և *հատանել* բայի *հատ* արմատի նաև իմաստաբանական փոխադարձ սերտ կապը, որովհետև *հատանել* նշանակում է նաև «կտրել», իսկ նրա *յատանել/յատել* տարբերակը՝ «կտրել, մանավանդ ծառի ճյուղերը կտրել», «ծառերի կամ մանավանդ որթի ավելորդ ճյուղերը կտրել»:<sup>45</sup> Վերջիններիս արմատակից հայերեն հետևյալ բառերը ցույց են տալիս հնդեվրոպական \*Had-արմատի իմաստային զարգացման ընթացքը. *հատ* «մեկ հատիկ սերմ, ունդ, մանավանդ ցորենի կամ ուրիշ հացաբույսի», *հատիճ* (<հատ-իճ), «կոտ», *հատիկ* (հատ-իկ) «սերմ», «խաշած ցորենով պատրաստված մի ուտելիք»:<sup>46</sup> Բացառված չէ, որ նույն հնդեվրոպական արմատը լինի նաև *հասկ* (<\*Had-sk?) և *հաց* (<\*Had-sk?) բառերի հիմքում:

Աստվածությունների քառյակը եզրափակում է <sup>D</sup>Irmušini-ն, որի կարևորության մասին է խոսում քելուզ. Սարգուրի II-ի (մ.թ.ա. 764-735թթ.) կողմից նրան ձեռնարկած տաճարը Հայկաբերդում (Չավուշ-թեփե հնավայրը):<sup>47</sup> Գր. Ղափանցյանը *Irmušini* դիցանվան հիմքում տեսնելով խեթ. *irma* «հիվանդություն» բառը, անվանակիր աստվածությանը վերագրում է բուժիչ գործառույթներ:<sup>48</sup> Գ. Ջահուկյանը այս դիցանվան վերջնամասում տեսնում է հայ. \**սին* (>սնել) արմատը՝ «ենթադրության սահմաններում» ձևակերպումով:<sup>49</sup> Մեր կարծիքով, *Irm-uš-ini* բաղադրիչների բաժանվող դիցանվան առաջին բաղադրիչի մեջ կարելի է տեսնել հնագույն հայերենի \*երմ արմատը՝ պահպանված երմուկ (\*<երմ-ուկ) բառի մեջ: *Երմուկ* նշանակում է «ալիք վարսակոյ, գարույ, ցորենոյ խոշոր աղացեալ», «ալիք խոշոր եւ սեւագոյն», «ճավար», «ցորենի թեփ» և համարվում է փոխառյալ բառ. *irmik* «կորկոտի շատ մանրը» բառից:<sup>50</sup> Հ. Աճառյանն այս վերջինիս առթիվ գրում է, որ «թուրք բառը չունի БУДАГОВ, բայց սովորական է օսմաներենի մեջ»:<sup>51</sup> Իսկ դա նշանակում է, որ թուրքական մյուս լեզուներում բացակայող և միայն օսմանյան (փոքրասիական) թուրքերենում առկա այս բառը թուր-

<sup>42</sup> Гр. К а п а н ц я н, Историко-лингвистические работы, Ер., 1956, стр. 196-198.

<sup>43</sup> ИЯИ, т. II, стр. 655.

<sup>44</sup> Древнегреческо-русский словарь, составил И. Дворецкий, т. I, М., 1958, стр. 43;

ՀԱԲ, հ. I, էջ 88:

<sup>45</sup> ՀԱԲ, հ. III, էջ 197, էջ 50-51, 386:

<sup>46</sup> ՀԱԲ, հ. III, էջ 50-51,

<sup>47</sup> ՎԹՊԿ, էջ 56, 123, ծան. 4:

<sup>48</sup> Гр. К а п а н ц я н, նշվ. աշխ., т. I, Ер., 1975, стр. 191.

<sup>49</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախազրային ժամանակաշրջան (այսուհետև՝

ՀԼՊԵԺ), էջ 444:

<sup>50</sup> ՀԱԲ, հ. II, էջ 46, ՀԲԲ, հ. I, էջ 577, 602:

<sup>51</sup> ՀԱԲ, հ. II, էջ 46:

քական ծագում չունի: Մեր կարծիքով, այն փոխառյալ է հացազգի բույսերի մշակութային բնագավառում հազարամյակների փորձ ունեցող տեղաբնիկ նստակյաց բնակչության լեզվից՝ հայերենից:

*Երմուկ* (տարբերակները՝ *իրմուկ*, *երեմուկ*) բառի հայերենում բնիկ լինելու մասին են խոսում հետևյալ փաստերը. ա) Այս բառը հայերենին բնորոշ կազմություն ունի՝ կազմված է *\*երմ* արմատից *-ուկ* վերջածանցով. *\*երմ-ուկ*>*երմուկ* (որից՝ *իրմուկ*, իսկ *երեմուկ*՝ *երեմնություն* «գերքի և կենսամթերքների առատություն» բառի ազդեցությամբ): բ) Բառի երեք տարբերակներում էլ առկա է մեր բուսանուններում հաճախ հանդիպող *-ուկ* վերջածանցը՝ հայերենի հնդեվրոպական ծագումով ամենագործուն վերջածանցներից մեկը (բուսանուններից հմմտ. *ավելուկ*, *գայլուկ*, *կանեփուկ*, *պատաստուկ* և այլն):<sup>52</sup> գ) *Երմուկ* բառի *\*երմ* բաղադրիչը մ'աճական մասնիկով ներկայացնում է *\*եր* արմատը՝ իր տարբերակներով առկա հայերեն ուրիշ բառերում և: Հ.-ե. *\*er-/\*or-/\*r-* արմատից ծագած բառերից մեկի՝ *արմ* «արմատ» բառի, վերաբերյալ Հ. Աճառյանը գրում է. «բնիկ հայ բառ՝ հմխ ր- արմատից (մանրամասն տե՛ս *յառնեմ*)՝-մ կամ *-մն* մասնիկով», ապա բերում է իմաստով նրան մոտ ցեղակից լեզուների բառերը (հուն. *ὄρμενος* «ցողուն, ընձյուղ, ծիլ», *ῥένος* «ծիլ, ճյուղ», հին իսլ. *renna* «ծլել, աճել», *rani* «ճյուղ», հրգ. *rono* «կոճղ, ծառի բուն» և այլն):<sup>53</sup> Արմատի այս նույն տարբերակից է լինելու նաև *արմայ* (<արմ-այ) բառը, որը նշանակում է «եզիպտացորենից պատրաստած կորկոտ», «խոշոր աղացած ալյուր, որը եփում են պուտուկի մեջ և վրան յուղ ածելով ուտում, խաշիլ»:<sup>54</sup>

Հնդեվրոպական *er-/\*or-/\*r-* արմատի<sup>55</sup> երկրորդ տարբերակից են հետևյալ բառերը. *որմն* «խոտազգիների կարգից գարիների ցեղին պատկանող բույս...», *որայ* «ցորենի կամ զարու խուրձ» (>որայիկ, որային), *որան* «քաղած հունձ, որ պետք է կալավի», գուցե նաև *որիզ(ն)* «քրինձ»<sup>56</sup> (*որ-իզ* հմմտ. *խոր-իզ/խոր-ինձ*, *կոր-իզ/կոր-ինձ*): Արմատի *եր-որ-ար-* տարբերակների առթիվ նշենք նաև, որ *n* և *r* բաղաձայներից առաջ հազվադեպ չէ *t/n/w* հերթազայությունը հայերենի մի շարք արմատակից բառերում:<sup>57</sup> Այսպիսով, *Իրմսինո* դիցանվան առաջին բաղադրիչը ներկայացնում է *երմուկ* (երմ-ուկ) բառի հիմքը՝ ծագած հ.-ե. արմատի վերին ձայնդարձից: Նրա երկրորդ՝ *-ա՛՛-*, բաղադրիչի հնչյունական համարժեքի անորոշության պատճառով առայժմ ձեռնպահ ենք մնում նրա ստուգաբանության փորձից, իսկ երրորդ՝ *-ինո*, բաղադրիչը, ինչպես նախապես նշվեց, հմապատասխանում է հայերենի հնդեվրոպական ծագմամբ *-ին* վերջածանցին:

Հայաստանի դիցաբանում կար <sup>D</sup>*Terittituni*- կոչված մի աստվածություն: Նրա կարևորության մասին խոսում է այն փաստը, որ հայաստանի ամենահարգի 14 աստվածությունների ցուցակում, Մուսիլուլիումա-Խուկանա պայմանագրի համաձայն, նա զբաղեցնում էր 8-րդ տեղը:<sup>58</sup> Որ նա սերտ առնչություն է ունեցել հացահատիկի պաշտամունքի հետ, կարելի է կռահել արդեն նրանից, որ հիշատակված է խաղողագործության հովանավոր <sup>D</sup>*Սungasta*-ից անմիջապես առաջ: Ինչպես պարզվում է հիշյալ դաշնագրից, հացահատիկային բույսերի մշակումից հետո և անասնապահությունից առաջ Հայաստանի գյուղատնտեսության մեջ կարևոր տեղ է գրավել խաղողագործությունը: Դաշնագրի խզման դեպքում խեթ թագավոր Մուսիլուլիուման (մ.թ.ա. 1380-1346թթ) հայաստացիներին սպառնում էր, թե կոչնչացվեն «ձեր տները, ձեր դաշտերը (իմա՛ արտերը), [ձեր բնակավայրերը], ձեր խաղողի այգիները, ձեր մարգագետինները (իմա՛ արոտավայրերը), ձեր խոշոր ու մանր անասունները, ձեր ամբողջ ունեցվածքը»:<sup>59</sup> *Terittituni* աստվածության հացահատիկ աղալու գործընթացն անձնավորելու մասին է

<sup>52</sup> ՀԼՊՆԺ, էջ 232, 356:

<sup>53</sup> ՀԱԲ, հ. I, էջ 327:

<sup>54</sup> ՀԲԲ, հ. I, էջ 274:

<sup>55</sup> ՀԱԲ, հ. III, էջ 384:

<sup>56</sup> ՀԲԲ, հ. III, էջ 580, 583, 586:

<sup>57</sup> ՀԱԲ, հ. I, էջ 253, 263, 291, 292, հ. III, էջ 575-576, 584-585, 586:

<sup>58</sup> *Keilschrifturkunden aus Boghazköi, Berlin, XXVI, 39, IV, 30.*

<sup>59</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 199: ՀՊ, էջ 37:

խոսում նրա անվան ատուգարանությունը: Գ. Ջահուկյանի հետևությամբ, մենք ևս չենք կարծում, թե այս դիցանունը «եռագի, եռապոչ» է նշանակում:<sup>60</sup>

Մեր կարծիքով, Terit – tituni բաղադրիչներից կազմված դիցանունը իր առաջին բաղադրիչի հիմքում ունի վերոհիշյալ *դիր/տիր* բառը, որը, ինչպես տեսանք, նշանակում է «ցորեն սերմանելու մի առանձին ձև, որ առատ և ընտիր ցորեն է տալիս», բայց որից ո՞նենք նաև *դիր ցորեն* բառակապակցությունը, որը նշանակում է «գիրով մշակված սպիտակ ընտիր ցորեն»:<sup>61</sup> Ըստ երևույթին, ուղղակի ծագումնաբանական կապ գոյություն ունի նրանց և *տրե* (բրբ. *դրա*) բառի միջև. *տրե* < \**տիր-է*: Այն նշանակում է «հայս ինչ յալերե եւ ի ձուոց հատեալ նման թելահայսի», այսինքն՝ «ողմած, էրիշտա», «տեղական մակարոն, որ պատրաստում են պինդ խմորից»:<sup>62</sup> Կարծում ենք, որ նույնպիսի կապի գոյությունը չի բացառվում նա. հայաստանի դիցանվան, հիշյալ բառերի և բարբառային *թիրիթ* (< \**թիր-իթ*) բառի միջև, որը նշանակում է «հացահատիկներով և չիրով պատրաստված ջրալի կերակուր»:<sup>63</sup> *Դ/տ/թ* համապատասխանության տեսանկյունից հմմտ. *դերփուկ/տերփուկ/տերեփուկ/թերեփուկ* բուսանունը:<sup>64</sup> *Թիրիթ*-ը կազմված է *-իթ* վերջածանցով (հմմտ. *գալիթ, կնճիթ, սամիթ* բառերը և *Բրիթ, Գնիթ, Չուիթ* և այլ անձնանունները): Նույնը կարելի է ասել և դիցանվան terit-մասում առկա -it վերջածանցի մասին. հմմտ. հ.-ե. -et (h)- կամ -ed-/-et- անվանական և հիմքակազմ վերջածանցները:<sup>64</sup> Ինչպես տեսնում ենք, \**դիր*/\**տիր* / \**թիր* արմատով կազմված բառերն առնչվում են նախ ցորենին ապա՝ նշում հացահատիկով և այլուրով պատրաստված կերակրատեսակները: Ըստ այսմ, արմատի նախնական նշանակությունը պետք է լիներ «ցորեն» կամ «հացահատիկ»:

Հայաստանի \*Terit-tituni դիցանվան երկրորդ մասի՝ \*tituni-ի հետնորդն ենք մենք տեսնում ի դեմս հայերեն *տտուն* (< \**տիտ-ուն*) բառի՝ կազմված *-ուն* վերջածանցով (հմմտ. *բեդ-ուն, իմաստ-ուն, ձեղ-ուն* և այլն):<sup>65</sup> *Տտուն* նշանակում է «չախչախ՝ փայտի շերտ, որ մի ծայրով ամրացած է ջրաղացի կրիճակին և մյուս ծայրով ընկած է ջրաղացքարի վրա, որի պտտվելիս ցնցվում է և ցնցումը հաղորդում է կրիճակին, որից ցորենը դանդաղաբար հոսում է ներքև և աղացվում»:<sup>66</sup> Ի նկատի առնելով հ.-ե. \**ձա*- «բաժանել, տրոհել, ճեղքել» արմատի ածանցյալ ձևերի, նրան առնչվող ուրարտական սեպագրության լեզվի *did-* «բաժանել, անջատել» բառի<sup>67</sup> և հայերեն բարբառային *տի-տիկել* (< *տիտ-իկ, տետ-իկ*) «փետրատել, բզիկ-բզիկ անել» բառի<sup>68</sup> գոյությունը, *տտուն* բառի *տիտ* (< հ.-ե. \**did-*) արմատին ևս կարելի է «վերագրել դրանց մոտ իմաստ, հավանաբար, «անջատել, աղալ» նշանակությամբ: Այսպիսով, Terit-tituni- դիցանունը ձեռք է բերում «ցորենը թեփից անջատող», այսինքն՝ «ցորեն աղացող» իմաստը:

Ի դեպ, Ուրարտուի բնակչության *pur-âli* կոչված խավի<sup>69</sup> անվան մեջ ևս կարելի է տեսնել նույն \**p(h)ur-* «հացահատիկ, հաց» արմատը, իսկ անվանը վերագրել «հացահատիկ մշակողներ» կամ «հացագործներ» իմաստը: *Pur-âli* բառաբարդի -âli վերջնամասը, ըստ երևույթին, հոգնակիակերտ է՝ համարժեքը *Aramâle, Դարանադի, Մանանադի, Մարդադի* գավառանուններում առկա -alê/-ադի տեղանվանակերտի<sup>70</sup> (իմաստի

<sup>60</sup> ՀԼՊՆԺ, էջ 329, Գր. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 62-63:

<sup>61</sup> ՀԲԲ, հ. I, էջ 523:

<sup>62</sup> ՀԲԲ, հ. IV, էջ 436: ՀԲԲ, հ. I, էջ 501: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի նաև *թրել* (< \**թիր*) «այլուր շաղախել, խմոր շինել» բայը: Հ.-ե. \**նրո-նախսաձևից* նրա սերած լինելու մասին է խոսում հունարեն նույնաձագում *τερω* (< *terio*) «տորրել, հարել», «ճնշել, սեղմել» բայը:

<sup>63</sup> ՀԲԲ, հ. IV, էջ 398:

<sup>64</sup> ИЯИ, т. I, стр. 218, 248, 346.

<sup>65</sup> Գ. Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 234:

<sup>66</sup> ՀԲԲ, հ. IV, էջ 8, 443:

<sup>67</sup> Г. Джаукян, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ер., 1967, стр. 21, 66, 124.

<sup>68</sup> ՀԲԲ, հ. IV, էջ 414:

<sup>69</sup> И. Дьяконов, И. Медведская, Урартское государство в новом освещении, «Вестник древней истории», 1987, N 3, стр. 207-208.

<sup>70</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 55-56.

տեսանկյունից հմնտ. Հայք՝ «Հայաստան» և «հայեր», Վիրք «Վրաստան» և «վրացիներ», Պարթեր «Պարթևաստան» և «պարթևներ» և այլն):

Ավելացնենք, որ ուրարտական դարաշրջանում Միփան սարը կոչվում էր Adduru<sup>71</sup> (<\*ad-duru): Լեռնական առաջին բաղադրիչը նույնական է Adaruta դիցանվան և հասն «հասնիկ» բառի հետ (<h.-ե. \*Had-), իսկ երկրորդ բաղադրիչը հայերեն տոմար-ք բառի ավելի հին ձևն է (<h.-ե. \*dōr-> հուն. δωρον «պարզև, ցվեր»):<sup>72</sup> Ուրեմն, Adduru նշանակում է «հասնիկատու (լեռ)»<sup>73</sup>

## УРАРТСКИЕ БОЖЕСТВА ЗЕРНА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ С. Петросян \_\_\_

Божества Элипури, Тараини, Адарута и Ирмушини урартского пантеона индоевропейско-армянского происхождения. В теониме Elipuri<\*eli-puri наличествуют и.-е. корни \*el-“подниматься”, “вырастать” и \*p(h)ūr- “пшеница”: ср. арм. եղի “незрелая пшеница” и փշուր “пища”, “суп из пахты” и т.д. В основе теонима Taraini <\*tara-ini лежит и.-е. корень \*t̥rs-“сохнуть, обсыхать” и суффикс -ini индоевропейского происхождения: ср. тот же суффикс в урартских теонимах Šiuini, Խիւինի, Nalaini и т.д., а также суффикс -ին, в армянских словах փնու-ին, դար-ին, լու-ին и т.д. Теоним Adaruta состоит из компонентов \*ad-ar-uta. Первый из них идентичен с и.-е. корнем \*Had-“зерно”>арм. հասն, հասնիկ “зерно”, а второе и третье – суффиксы и.-е. происхождения: ср. арм. փշ-փշ, փշ-փր, փշ-փր с одной стороны, а с другой- ել-ելք, երև-ելք, փշր-ելք и т.д. В теониме Irmušini <\*Irm-uš-ini наличествует тот же корень, что и в арм. слове երմկ/իրմկ “пшеничная крупа, ячменная крупа, мучная крупа”, “толокно”. Она одного происхождения с армянскими словами փրմ, փրմա “корень” (<и.-е. \*t̥- “подниматься, воскреснуть”) и փրմա “кукурузная крупа”, “мучная крупа”, “жижа”. Компонент -uš- в этом теониме не поддается этимологии ввиду неопределенности звукового состава, а компонент -in(i) представляет вышеупомянутый суффикс. По всей вероятности, божества Элипури, Тараини, Адарута и Ирмушини являются олицетворениями следовавших друг за другом фаз вегетационного цикла созревания пшеницы.

<sup>71</sup> Н. А р у т ю н я н, *Топонимка Урарту, Ер., 1985, стр. 12-13.*

<sup>72</sup> ՀԱԲ, հ. IV, էջ 357:

<sup>73</sup> Միփանի ստորոտին գտնվող Արծկեի գավառի վերաբերյալ Գ. Խրվանձոտյանը գրում է. «Օր գավառի բարեխառն. լեռանց կողմերը զով և Միփան գագաթը մշտաձյուն: Հողը բերրի և ընտիր ցորենն ու խոտ կը բերե» (Գ. Մրվանձոտյանց, *Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 406*):